## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

# ՈՐՈՇՈՒՄ

«30» մարտի 2022 թվականի N 83-Լ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՖՈՆԴԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդված 9-րդ մասի 7-րդ կետի և Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2019թ. մարտի 29-ի թիվ 7/6 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի անդամների և աշխատակիցների պարգևատրման» կարգի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ կետերի պահանջներով, ՀՀ հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Սահմանել 2022 թվականի մարտ ամսվա համար ՀՀ հաշվեքննիչ պալատի (այսուհետև՝ Պալատ) պարգևատրման ֆոնդի մեծությունը, «Պալատի անդամների պարգևատրման» ենթաֆոնդը, Պալատի անդամների պարգևատրման տոկոսային հարաբերակցությունը և պարգևատրման չափը, «Պալատի գլխավոր քարտուղարի և կառուցվածքային ստորաբաժանման մեջ չընդգրկված աշխատակիցների պարգևատրման» և «Պալատի կառուցվածքային ստորաբաժանումների պարգևատրման» ենթաֆոնդերի չափը համաձայն հավելվածի:
2. Ֆինանսատնտեսական և հաշվապահական հաշվառման վարչության պետ-գլխավոր հաշվապահ Ն.Սահակյանին՝
   - սահմանված կարգով ապահովել պարգևատրման գումարների վճարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ